

ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԵՐԼՁԱԿՅԱՆ

Ծնվել է 1951թ. մարտի 2-ին Երևանում:

1974թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական
ինստիտուտի կիբեռնետիկայի ֆակուլտետը:

1983թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական
ինստիտուտը՝ ստանալով ռեժիսորի մասնագիտություն:

1971-1972թթ. նրա ստեղծած Ուրախների և հնարա-
միտների ակումբի առաջին հայկական թիմը Մոսկվայում
կայացած համամիութենական մրցույթներում հասել է
եզրափակիչ փուլ:



1976թ. կազմավորել է «Տղամարդկանց ակումբը», որն ուներ թատերական որոշակի
ուղղվածություն:

1982թ. հիմնադրել է Երևանի կամերային թատրոնը, որի ղեկավարն է մինչ օրս:

30-ից ավելի պիեսների, հինգ կինոսցենարների, մի շարք գիտական աշխատանքների
հեղինակ է:

Թատրոնում իրագործել է 50-ից ավելի բեմադրություններ, տասնյակ մեծամասշտաբ
շոու-միջոցառումներ («Սուրբ Ծնունդ» և այլն), նկարահանել է լիամետրաժ
գեղարվեստական 2 կինոֆիլմ՝ «Ժամկետը՝ 7 օր» (1990թ.), «Արմենիկում UPSA» (1999թ.):

1992-1995թթ. իրականացրել է մի շարք հեռուստանախագծեր՝ «Նորք» (Երևան), ՕՈՏ
(Մոսկվա), «Արմենիա թուղեյ» (ԱՄՆ) հեռուստաընկերությունների պատվերներով:

1996թ.-ից առաջին անգամ Հայաստանում կազմակերպել է «Միսս Հայաստան»
գեղեցկության և նրբագեղության ազգային մրցույթը, եղել է մրցույթի կազմկոմիտեի
նախագահը:

1998թ. ստեղծել է «ԵՐԿԱԹ TV փրոդաքշըն»-ը, հետագայում՝ «ՅԱՆ TV»
հեռուստաընկերությունը:

1998-2001թթ. զբաղեցրել է Երևանի քաղաքապետարանի մշակույթի,
երիտասարդության հարցերի և սպորտի վարչության պետի պաշտոնը:

Հայաստանի թատերական գործիչների միության անդամ է, Հայաստանի
կինեմատոգրաֆիստների միության անդամ, «Հայաստան-Կիպրոս» ընկերության
նախագահն է, բազմաթիվ կինո և թատերական միջազգային փառատոների դափնեկիր:

Թատերական արվեստում բացառիկ նվաճումների համար 2005թ. արժանացել է
«Արտավազդ» մրցանակի:

2006 - 2007թթ. թատերաշրջանի «Լավագույն ներկայացում» անվանակարգում
արժանացել է ամենամյա մրցանակի՝ «Ի գեն» ներկայացման համար, 2009թ. նրա
«Հոբելյանական հաճախորդ» պիեսը ճանաչվել է «Տարվա լավագույն պիես»:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ է:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր: